


ՀԱՅ-ՌՈՒՄԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՄԱԹԵՄԱՏԻԿԱՅԻ ԵՎ ԻՆՖՈՐՄԱՏԻԿԱՅԻ
ԻՆՍՏԻՏՈՒՏ

Սևակ Սարգսյան Հայկ Ասլանյան



«Ալգորիթմներ և ալգորիթմական լեզուներ»

Գործնական պարասպմունքների ուղեցույց

Մաս I





**РОССИЙСКО-АРМЯНСКИЙ (СЛАВЯНСКИЙ) УНИВЕРСИТЕТ
ИНСТИТУТ МАТЕМАТИКИ И ИНФОРМАТИКИ**

СЕВАК САРГСЯН, АЙК АСЛАНЯН

АЛГОРИТМЫ И АЛГОРИТМИЧЕСКИЕ ЯЗЫКИ
Руководство для практических занятий
Часть I

Ереван–2024

Издательство РАУ

**ՀԱՅ-ՌՈՒՄԱԿԱՆ (ՍԼԱՎՈՆԱԿԱՆ) ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՄԱԹԵՄԱՏԻԿԱՅԻ ԵՎ ԻՆՖՈՐՄԱՏԻԿԱՅԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ**

ՍԵՎԱԿ ՍԱՐԳՍՅԱՆ, ՀԱՅԿ ԱՍԼԱՆՅԱՆ

**ԱԼԳՈՐԻԹՄՆԵՐ և ԱԼԳՈՐԻԹՄԱԿԱՆ ԼԵԶՈՒՆԵՐ»
Գործնական պարապմունքների ուղեցույց
Մաս I**

Երևան–2024

ՀՌՀ հրատարակչություն

ՀՏԴ 004(07)
ԳՄԴ 32.97g7
Ս 259

*Հրատարակման երաշխավորվում Հայ-
Ռուսական համալսարանի
Գիտատեխնիկական և Խմբագրա-
Հրատարակչական խորհրդի կողմից*

Պատասխանատու խմբագիր՝ տ.գ.թ. Ջ.Ա.Հակոբյան
Գրախոս՝ Երևանի պետական համալսարանի
Ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի ֆակուլտետի
Ծրագրավորման և ինֆորմացիոն տեխնոլոգիաների ամբիոնի դասախոս, տեխ.գիտ.թեկնածու, դոցենտ
Ա.Ս.Հովակիմյան

Սարգսյան Ս., Ասլանյան Հ.
Ս 259 Ալգորիթմներ և ալգորիթմական լեզուներ: Գործնական պարապմունքների ուղեցույց Մաս 1. /
Ս. Սարգսյան, Հ. Ասլանյան. – Եր.: ՀՌՀ, 2024. – 75 էջ:

Սույն աշխատանքի նպատակն է ուղղորդել «Ալգորիթմներ և ալգորիթմական լեզուներ» առարկայի գործնական աշխատանքները: Յուրաքանչյուր դասի համար բերվում է համառոտ նկարագիր ուսումնասիրվող թեմայի վերաբերյալ և կողի որոշ օրինակներ: Այնուհետ ներկայացվում են մի շարք խնդիրներ, որոնց մի մասը պետք է լուծվեն գործնական աշխատանքի ժամանակ, իսկ մնացած մասը հանձնարարվեն որպես տնային աշխատանք:

ՀՏԴ 004(07)
ԳՄԴ 32.97g7

© ՀՌՀ հրատարակչություն, 2024

ISBN 978-9939-67-340-0

© Սարգսյան Ս.Ս., Ասլանյան Հ.Կ., 2024

Նախաբան

Այս ձեռնարկում ներկայացված են Հայ-Ռուսական համալսարանի, Մաթեմատիկայի և Ինֆորմատիկայի ինստիտուտում դասավանդվող «Ալգորիթմներ և ալգորիթմական լեզուներ» առարկայի շրջանակում լուծվող գործնական խնդիրները: Այս առարկայի նպատակն է ուսանողներին սովորեցնել ալգորիթմական մտածողություն: Նպատակին հասնելու համար ուսանողները սովորում են C և C++ ծրագրավորման լեզուները՝ լուծելով տարբեր ալգորիթմական խնդիրներ: C լեզուն պարզ է և ապահովում է համակարգչի ռեսուրսները կառավարելու հնարավորություն, ինչը թույլ է տալիս հասկանալ համակարգչի աշխատանքի հիմնական սկզբունքները: C++ լեզուն, որը ուսումնասիրվում է առարկայի երկրորդ մասում, ավելի շատ ֆունկցիոնալ հնարավորություններ է տրամադրում և թույլ է տալիս հասկանալ օբյեկտակողմնորոշված ծրագրավորման հիմունքները:

Դաս 1. Ծանոթություն C լեզվի հետ

Ներկայացվում է C լեզուն, նախնական կողի թարգմանության, ինչպես նաև ստացված ծրագրի կատարման պրոցեսը: Բերվում է առաջին ծրագրի օրինակը, որը ներկայացված է ներքևում: Ներկայացվում է կցված stdio գրադարանը, էլքագրման համար նախատեսված printf ֆունկցիան, ինչպես նաև հատուկ սիմվոլները՝ '\n', '\t'.

```
// The first program "Hello World"
#include <stdio.h>
int main(void)
{
    printf("Hello World\n");
}
```

Ներկայացվում է ամբողջ թվերի համար նախատեսված int տիպը: Ներկայացվում են որոշ պարզ գործողություններ ամբողջ տիպերի հետ: Պատմվում է փոփոխականի տեսանկյունից տիրույթի մասին: Ներքևում բերված է կողի օրինակ, որը թույլ է տալիս արտածել ամբողջ տիպի փոփոխականի թվային արժեքը:

```
#include <stdio.h>
int main(void)
{
    int x = 10;
    printf("The value of x is %d\n", x);
}
```

Խնդիր 1

Արտածեք ձեր անունը և ազգանունը առանձին տողերում:

Խնդիր 2

Արտածել հետևյալ պատկերները.

```
 * * * *      *      *
 *   *      * * *      * *
 *   *      * * * * *      * * *
 * * * *      * * *      * * * *
                *      * * * * *
```

Խնդիր 3

Հայտարարել int տիպի երկու ամբողջ թվեր և հաշվել դրանց գումարը, տարբերությունը և արտադրյալ: Արտածել ստացված արդյունքները: Ներքևում բերվում է գումարը հաշվող կոդի օրինակը:

```
#include <stdio.h>
int main(void)
{
    int x = 10;
    int y = 20;
    int sum = x + y;
    printf("%d\n", sum);
}
```

Խնդիր 4

Հաշվել տրված ամբողջ թվի քառակուսին և խորանարդը: Արտածել ստացվածը արդյունքները:

Խնդիր 5

Հաշվել $ax^2 + bx + c$ արտահայտության արժեքը, եթե տրված են a, b, c գործակիցները և x փոփոխականը: Հայտնի է, որ a, b, c, x թվերը ամբողջ թվեր են:

Դաս 2. Տիպեր, մոդիֆիկատորներ, գործողություններ, սահմաններ, տվյալների մուտքագրում և ելքագրում

Ամբողջ տիպերի մոդիֆիկատորներ, հիմնականգործողություններ

Ներկայացվում են ամբողջ տիպի մոդիֆիկատորները և հիմնական գործողությունները: Բերվում են տարբեր մոդիֆիկատորներով ամբողջ տիպերի արտաձման միջոցները: Ներքևում բերվում են մոդիֆիկատորների օգտագործման և փոփոխականների արտաձման օրինակներ:

```
#include <stdio.h>
int main ()
{
    short s = 10;
    int i = 20;
    long l = 30;
    long long ll = 40;

    printf("short: %d\n", s);
    printf("int: %d\n", i);
    printf("long: %ld\n", l);
    printf("long long: %lld\n", ll);

    unsigned short us = 100;
    unsigned int ui = 200;
    unsigned long ul = 300;
    unsigned long long ull = 400;

    printf("unsigned short: %u\n", us);
    printf("unsigned int: %u\n", ui);
    printf("unsigned long: %lu\n", ul);
    printf("unsigned long long: %llu\n", ull);
}
```

```

#include <stdio.h>
int main(void)
{
    int a = 10, b = 20, d = 15;
    int sum = a + b;
    int diff = a - b;
    int mul = a * d;
    int div = d / a;
    int div_rem = d % a;
    printf("Sum = %d\n", sum);
    printf("Diff = %d\n", diff);
    printf("Mul = %d\n", mul);
    printf("Div = %d\n", div);
    printf("Div. rem. = %d\n", div_rem);
}

```

Ամբողջ տիպի փոփոխականների սահմաններ

```

#include <stdio.h>
#include <limits.h>
int main () {
    printf("The minimum value of SHORT INT = %hd\n", SHRT_MIN);
    printf("The maximum value of SHORT INT = %hd\n", SHRT_MAX);

    printf("The minimum value of INT = %d\n", INT_MIN);
    printf("The maximum value of INT = %d\n", INT_MAX);

    printf("The minimum value of LONG INT = %ld\n", LONG_MIN);
    printf("The maximum value of LONG INT = %ld\n", LONG_MAX);

    printf("The minimum value of LONG LONG INT = %lld\n", LLONG_MIN);
    printf("The maximum value of LONG LONG INT = %lld\n", LLONG_MAX);
}

```

Առանց նշանի թվեր

```
#include <stdio.h>
#include <limits.h>

int main () {
    printf("The maximum value of UNSIGNED SHORT INT = %u\n",
    USHRT_MAX);
    printf("The maximum value of UNSIGNED INT = %u\n", UINT_MAX);
    printf("The maximum value of UNSIGNED LONG INT = %lu\n",
    ULONG_MAX);
    printf("The maximum value of UNSIGNED LONG LONG INT = %llu\n",
    ULLONG_MAX);
}
```

Տվյալների մուտքագրում

Ներկայացվում են տվյալների մուտքագրման միջոցները, որոնցից մեկ օրինակ բերված է ներքևում:

```
#include <stdio.h>
int main ()
{
    int x;
    printf("Enter an integer ");
    scanf("%d", &x);
    printf("Displaying number %d", x);
}
```

Սահող կետով թվեր

Ներկայացվում են իրական թվերի՝ համակարգչում պահպանման մոտեցումները, որոնց այսուհետ կհղվենք սահող կետով թվեր: Ներկայացվում են float և double տիպերը: Բերվում են սահող կետերով թվերի հետ կատարվող հիմնական գործողությունները և դրանց արտաձման միջոցները:

```

#include <stdio.h>
int main(void)
{
    float a = 1.2, b = 0.3;
    float sum = a + b;
    float diff = a - b;
    float mul = a * b;
    float div = a / b;
    printf("sum = %f\n", sum);
    printf("diff = %f\n", diff);
    printf("mul = %f\n", mul);
    printf("div = %f\n", div);
}

```

Ներկայացվում են նաև սահող կետով թվերի պահպանման ժամանակ առաջացող ճշտության կորուստները:

```

#include <stdio.h>

int main(void)
{
    float f = 3.999999;
    f = f * f;
    double d = 3.999999;
    d = d * d;
    long double ld = 3.999999;
    ld = ld * ld;
    printf("f = %.20f d = %.20f, ld = %.20LF", f, d, ld);
}

```

Խնդիր 1

Մուտքագրել երկու ամբողջ թիվ և արտածել նրանց գումարը, տարբերությունն ու արտադրյալը:

Խնդիր 2

Մուտքագրել երկու/երեք բնական թիվ և արտածել նրանց միջին թվաբանականը և միջին երկրաչափականը:

Խնդիր 3

Մուտքագրել քառանիշ թիվ: Արտածել թվի թվանշանները՝ դասավորված հակառակ կարգով (օրինակ՝ 1265, 5621):

Խնդիր 4

Մուտքագրել քառանիշ թիվ: Արտածել թվի թվանշանները, դրանց միջև տեղադրելով գծիկներ (օրինակ՝ 6508, 6-5-0-8):

Խնդիր 5

Մուտքագրել օրերի քանակ և արտածել այդ օրերը վերածած տարիների, շաբաթների:

Խնդիր 6

Մուտքագրել եռանիշ ամբողջ թիվ և արտածել առաջին, երկրորդ և երրորդ թվանշանները:

Խնդիր 7

Մուտքագրել եռանիշ ամբողջ թիվ և արտածել բոլոր թվանշանների գումարը:

Խնդիր 8

Մուտքագրել օրվա ժամը՝ օրվա սկզբից անցած վարկյանների տեսքով: Արտածել թե քանի լրիվ ժամ և րոպե է անցել այդ պահին:

Խնդիր 9

Արտածել համապատասխան ժամսլաքների անկյունները (աստիճաններով) օրվա սկզբում դրանց դիրքերի և $h(\text{ժամ}):m(\text{րոպե}):s(\text{վայրկյան})$ ժամին համապատասխան դիրքերի միջև:

$h(0 \leq h < 12)$, $m(0 \leq m < 60)$ և $s(0 \leq s < 60)$ արժեքները մուտքագրվում են:

Խնդիր 10

Մուտքագրել խորանարդի կողմը սահող թվով: Արտածել խորանարդի ծավալը և կողմնային մակերևույթի մակերեսը:

Խնդիր 11

Մուտքագրել շրջանագծի տրամագիծը և արտածել նրա մակերեսը 5 նիշի ճշտությամբ:

Խնդիր 12

Մուտքագրել եռանկյան կողմերը և արտածել եռանկյան պարագիծն ու մակերեսը:

Խնդիր 13

Մուտքագրել հարթության վրա երկու կետերի կոորդինատները և արտածել դրանց միջև հեռավորությունը:

Դաս 3. Սիմվոլային տիպ, տվյալների կոդավորում, sizeof օպերատոր

Սիմվոլների կոդավորում

Ներկայացվում է սիմվոլների կոդավորման (ASCII կոդ) հիմնական սկզբունքները և char սիմվոլային տիպը: Ներքևում բերվում է char տիպի օգտագործման օրինակ:

```
#include <stdio.h>
int main(void)
{
    char chr;
    printf("Enter a character: ");
    scanf("%c", &chr);

    // When %c is used, a character is displayed
    printf("You entered %c.\n",chr);

    // When %d is used, ASCII code value is displayed
    printf("ASCII value is %d.", chr);
}
```

Սիմվոլային տիպի հետ թույլատրվում են կատարել թվաբանական գործողություններ՝ ինչպես ամբողջ տիպով փոփոխականների հետ: Ներքևում բերվում է օրինակ:

```
#include <stdio.h>

int main(void)
{
    char x = 'a';
    char y = x + 8;
    char z = y - 3;
    printf("%c : %c", y, z);
}
```

Հաջորդ օրինակը արդեն ցույց է տալիս մուտքագրված լատիներեն մեծատառի համար համապատասխան փոքրատառի ստացումը:

```
#include <stdio.h>

int main(void)
{
    char upperCase;
    printf("Enter an uppercase character ");
    scanf("%c", &upperCase);
    char lowerCase = upperCase + 32; // upperCase + 'a' - 'A';
    printf("The lowercase character is %c\n", lowerCase);
}
```

sizeof օպերատոր

Ներկայացվում է *sizeof* օպերատորը՝ տիպերի չափերը ստանալու համար: Ներքևում բերվում է օգտագործման օրինակ:

```
#include <stdio.h>

int main(void)
{
    printf("%lu\n", sizeof(char));
    printf("%lu\n", sizeof(int));
    printf("%lu\n", sizeof(float));
    printf("%lu\n", sizeof(double));

    int a = 0;
    double d = 10.21;
    printf("%d\n%lu", a+(int)d, sizeof(a + (int)d));
}
```

Տվյալների կոդավորման սկզբունքներ

Ներկայացվում է համակարգչում տվյալների կոդավորման հիմնական մոտեցումները՝ ուղիղ, հակադարձ և լրացուցիչ կոդեր: Ներքևում բերվում է

օրինակներ տվյալների տասնվեցական, տասական, ութական և երկուականներկայացումների համար:

Տասական	Երկուական	Ութական	Տասնվեցական
0	00000000	00	0x0
1	00000001	011	0x1
8	00001000	015	0xA
12	00001100	023	0x10
36	00100100	045	0x22
17	00010001	0100	0x99
254	11111110	0156	0xFF

Ներքևում ևս մի քանի օրինակներ բերվում են արդեն տվյալների երկուականներկայացման ուղիղ, հակադարձ և լրացուցիչ կոդերի համար:

Տասական	Ուղիղ	Հակադարձ	Լրացուցիչ
8	00001000	11110111	11111000
9	00001001	11110110	11110111
-9	10001001	11110110	11110111
-12	10001100	11110011	11110100

Ներկայացվում է, որ առանց նշանով թվերի դեպքում չի օգտագործվում նշանի բիթը, ինչը թույլ է տալիս պահպանել ավելի մեծ դրական թվեր:

```
#include <stdio.h>
int main(void)
```

```
{
    int a = 4294967295; // wrong
    unsigned int b = 4294967295; // ok
    printf("a = %d, b = %u", a, b);
}
```

Խնդիր 1

Մուտքագրված լատիներեն փոքրատառի համար արտածել համապատասխան մեծատառը:

Խնդիր 2

Մուտքագրված ASCII կոդի համար արտածել համապատասխան սիմվոլը:

Խնդիր 3

Մուտքագրված լատիներեն մեծատառի համար արտածել համապատասխան փոքրատառը:

Խնդիր 4

Մուտքագրված սիմվոլի համար արտածել համապատասխան ASCII կոդը:

Խնդիր 5

Մուտքում ստացված *int*, *float*, *double*, *char* տիպի փոփոխականների համար արտածել դրանց չափերը, այնուհետև կատարելով թվաբանական գործողություններ դրանց հետ՝ արտածել ստացված նոր արժեքների տիպերիչափերը, օգտագործելով *sizeof* օպերատորը:

Խնդիր 6

Աղյուսակում նշված երկուական ներկայացման համար ստանալ տասական ներկայացումը: Լուծել խնդիրը երկու դեպքերի համար, երբ տվյալները տրամադրված են ուղիղ կոդով և լրացուցիչ կոդով:

Երկուական կոդ	Լրացուցիչ կոդով դեպք	Ուղիղ կոդով դեպք
0000 0000	0	0
0000 0001	1	1
1111 1111	-1	-127
0111 0111	119	119
1000 1001	-119	-9
1000 0001	-127	-1

Դաս 4. Բիթային, համեմատման և ճյուղավորման օպերատորներ

Բիթային օպերատորներ

Ներկայացվում են հիմնական բիթային օպերատորները և դրանց հետաշխատելու օրինակներ:

```
#include <stdio.h>

int main(void)
{
    int a = -10, b = 21;
    printf("Output = %d\n", a&b); // bitwise and

    printf("Output = %d\n", a|b); // bitwise or
    printf("Output = %d\n", a^b); // bitwise xor
    printf("Output = %d\n", ~a); // bitwise complement
    int i = 2;
    printf("Right shift by %d: %d\n", i, a>>i);
    printf("Left shift by %d: %d\n", i, b<<i);
}
```

Ճյուղավորման պարզագույն օպերատոր

Ներկայացվում է ծրագիր ճյուղավորման պարզագույն if/else օպերատոր, որի կիրառման օրինակներից երկուսը բերվում է հաջորդիվ:

```
// Program to display a number if it is negative
#include <stdio.h>
int main(void)
{
    int number;
    printf("Enter an integer: ");
    scanf("%d", &number);
}
```

```

// true if number is less than 0
if (number < 0)
{
    printf("You entered %d.\n", number);
}
}

```

```

// Check whether an integer is odd or even
#include <stdio.h>

int main(void)
{
    int number;
    printf("Enter an integer: ");
    scanf("%d", &number);
    // True if the remainder is 0
    if (number % 2 == 0)
    {
        printf("%d is an even integer.", number);
    }
    else
    {
        printf("%d is an odd integer.", number);
    }
}

```

Համեմատման օպերատորներ

Ներկայացվում են համեմատման օպերատորները (<, >, ==, !=, >=, <=) և դրանց հետ աշխատելու օրինակներ, որոնցից մեկը բերված է ներքևում:

```

// Working of relational operators
#include <stdio.h>
int main(void)
{
    int a = 5, b = 5, c = 10;

```

```

printf("%d == %d is %d \n", a, b, a == b);
printf("%d == %d is %d \n", a, c, a == c);
printf("%d > %d is %d \n", a, b, a > b);
printf("%d > %d is %d \n", a, c, a > c);
printf("%d < %d is %d \n", a, b, a < b);
printf("%d < %d is %d \n", a, c, a < c);
printf("%d != %d is %d \n", a, b, a != b);
printf("%d != %d is %d \n", a, c, a != c);
printf("%d >= %d is %d \n", a, b, a >= b);
printf("%d >= %d is %d \n", a, c, a >= c);
printf("%d <= %d is %d \n", a, b, a <= b);
printf("%d <= %d is %d \n", a, c, a <= c);
}

```

Համեմատման օպերատորների
օպերատորներում

օգտագործումը

ճյուղավորման

Ներկայացվում են ինչպես կարող են օգտագործվել համեմատման օպերատորները ճյուղավորման օպերատորներում: Ստորև բերված օրինակում օգտագործվում է նաև else if.

```

#include <stdio.h>

int main(void)
{
    int x; scanf("%d",
    &x);if (x > 0) {
        printf("x is positive\n");
    } else if (x == 0) { printf("x
    is zero\n");
    } else {
        printf("x is negative\n");
    }
}

```

Խնդիր 1

Ներմուծել *int x, y;* *float z;* *char c;* փոփոխականների արժեքները: Արտածել հետևյալ արտահայտությունների արժեքները:

1. $x \gg y$
2. $x \& y / \sim x$
3. $x / \sim x$
4. $x \& x + y$
5. $c = '1'; c \ll 2 \gg 2$
6. $++x - y \geq 5 \&\& y$

Խնդիր 2

Մուտքագրված ամբողջ թիվը բաժանել/բազմապատկել 2-ի/ով, 4-ի/ով, 8-ի/ով՝ օգտագործելով միայն բիթային տեղաշարժի գործողությունները:

Խնդիր 3

Մուտքագրված ամբողջ թիվը բազմապատկել 6-ով միայն օգտագործելով գումարում և բիթային տեղաշարժ գործողությունները:

Խնդիր 4

Մուտքագրված ամբողջ թվի առաջին 5 բիթերը լրացնել զրոներով:

Խնդիր 5

Մուտքագրված ամբողջ թվի 7-րդ բիթի արժեքը սարքել 1:

Խնդիր 6

Մուտքագրված թվի երկուական ներկայացման մեջ գտեք ամենաաջիկոքը, որը պարունակում է 1 արժեքը:

Խնդիր 7

Փոխանակել մուտքագրված երկու փոփոխականների արժեքները առանց երրորդ փոփոխական օգտագործելու:

Խնդիր 8

Մուտքագրել a և b բնական թվերը, արտածել "yes", եթե երկուսն էլ զույգ են:

Խնդիր 9

Մուտքագրել a և b բնական թվերը, արտածել "yes", եթե դրանցից գոնեմեկը կենտ թիվ է:

Խնդիր 10

Մուտքագրել $input_1$, $input_2$ և $input_3$ ամբողջ թվերը: Արտածել "*condition is correct*", եթե

1. երեքն էլ դրական են,
2. նրանցից գոնե մեկը դրական է,
3. նրանցից ճիշտ մեկը դրական է,
4. նրանցից ճիշտ երկուսը դրական են,
5. նրանցից գոնե երկուսն իրար հավասար են,

Հակառակ դեպքում "*condition isn't correct*":

Դաս 5. Ներդրված ճյուղավորման օպերատորներ, switch/case օպերատոր, enum տիպ

Ներդրված ճյուղավորման օպերատորներ

Ներկայացվում են ներդրված ճյուղավորման օպերատորների կառուցվածքը: Ներքևում բերվում է օրինակ:

```
// Program example of nested if else
#include <stdio.h>
int main(void)
{
    int number1, number2;
    printf("Enter two integers: ");
    scanf("%d %d", &number1, &number2);
    if (number1 >= number2)
    {
        if (number1 == number2)
        {
            printf("Result: %d = %d", number1, number2);
        }
        else
        {
            printf("Result: %d > %d", number1, number2);
        }
    }
    else
    {
        printf("Result: %d < %d", number1, number2);
    }
}
```

switch/case օպերատոր

Ներկայացվում է *switch/case* օպերատորը և դրա հիմնական կիրառությունները, որի օրինակներից մեկը ներկայացված է հաջորդիվ:

```
// Program to create a simple calculator
#include <stdio.h>

int main(void)
{
    char op;
    double n1, n2;
    printf("Enter an op (+, -, *, /): ");
    scanf("%c", &op);

    scanf("%lf %lf", &n1, &n2);
    switch(op)

        case '+':
            printf("%.1lf %.1lf %.1lf", n1, n2, n1 + n2);
            break;
        case '-':
            printf("%.1lf %.1lf %.1lf", n1, n2, n1 - n2);
            break;

        // op doesn't match any case constant +, -, *, /
        default:
            printf("Error! op is not correct");
    }
    case '*':
        printf("%.1lf %.1lf %.1lf", n1, n2, n1 * n2);
        break;
    case '/':
        printf("%.1lf %.1lf %.1lf", n1, n2, n1 / n2);
        break;
```

enum տիպ

Ներկայացվում է enum տիպը և դրա հիմնական կիրառությունները:
Հաջորդիվ բերվում է կիրառության օրինակ:

```
#include <stdio.h>

enum week { Sunday, Monday, Tuesday, Wednesday, Thursday, Friday, Saturday };

int main(void)
{
    // creating today variable of enum week type
    enum week today;
    today = Wednesday;
    printf("Day %d", today + 1);
}
```

Խնդիր 1

Գրել ծրագիր, որը մոտքում կստանա Էլեկտրաէներգիայի ծախսը և կհաշվարկի վճարման ենթակա գումարը՝ ըստ տրված պայմանների՝

1. Առաջին 50 միավորի համար - 0,50դրամ/միավոր,
2. Հաջորդ 100 միավորների համար - 0,75դրամ/միավոր,
3. Հաջորդ 100 միավորների համար - 1,20դրամ/միավոր,
4. 250 -ից բարձր միավորի համար - 1,50դրամ/միավոր:

Խնդիր 2

Գրել ծրագիր, որը մոտքում կստանա ֆիզիկա, քիմիա, կենսաբանություն, մաթեմատիկա և ինֆորմատիկա առարկաների գնահատականները (0-20 միջակայքում), կհաշվարկի և կարտածի միջինացված առաջադիմության տոկոսը ու կտրամադրի կարգ՝ ըստ տրված պայմանների

1. **Տոկոսը $\geq 90\%$: Ա Կարգ**
2. **Տոկոսը $\geq 80\%$: Բ Կարգ**
3. **Տոկոսը $\geq 70\%$: Գ Կարգ**
4. **Տոկոսը $\geq 60\%$: Դ Կարգ**
5. **Տոկոսը $\geq 40\%$: Ե Կարգ**
6. **Տոկոսը $< 40\%$: Չ Կարգ**

Խնդիր 3

Գրել ծրագիր, որը մոտքում կստանա ամսին համապատասխան թիվը և կարտածի այդ ամսվա օրերի քանակը (օգտագործել *switch/case*):

Խնդիր 4

Գրել ծրագիր, որը մոտքում կստանա ամսին համապատասխան թիվը և կարտածի այդ ամսվա օրերի քանակը (օգտագործել *switch/case*):

Խնդիր 5

Գրել ծրագիր, որը մոտքում կստանա շաբաթվա օրը և կարտածի համապատասխան օրվա անունը (օգտագործել *switch/case*):

Խնդիր 6

Գրել պարզ հաշվիչ, որը մոտքում կստանա 2 իրական թիվ, գործողության տեսակը և կարտածի գործողության արդյունքը(օգտագործել *switch/case*):

Դաս 6. while և do/while ցիկլեր

Ներկայացվում է while ցիկլը, դրա կառուցվածքը և կիրառման տիրույթը: Բերվում է ցիկլի պայմանում համեմատման օպերատորների (<, >, ==, !=, >=, <=) օգտագործման տարբերակները: Ներքևում բերված է պարզցիկլի օրինակ:

```
// Print numbers from 1 to 5
#include <stdio.h>

int main(void)
{
    int i = 1;
    while (i <= 5)
    {
        printf("%d\n", i);
        ++i;
    }
}
```

Հաջորդ օրինակում ցուցադրված է անվերջ աշխատող ցիկլ:

```
// Example of infinite while loop
#include <stdio.h>

int main(void)
{
    int var = 6;
    while (var >=5)
    {
        printf("%d", var);
        var++;
    }
}
```

Բերվում են օրինակներ ցիկլի ներսում ճուղավորման օպերատորներ կիրառելու վերաբերյալ: Մասնավորապես հաջորդիվ բերվում է երկու թվերի ամենամեծ ընդհանուր բաժանարարը գտնող ծրագրի օրինակ:

```

#include <stdio.h>
int main(void)
{
    int n1, n2;
    printf("Enter two positive integers: ");
    scanf("%d %d",&n1,&n2);
    while(n1 != n2)
    {
        if(n1 > n2)
            n1 -= n2;
        else
            n2 -= n1;
    }
    printf("GCD = %d",n1);
}

```

Ներկայացվում է do/while ցիկլի կառուցվածքը և հիմնական տարբերությունները while ցիկլից: Հաջորդիվ բերվում է պարզ օրինակ:

```

// Program to add numbers until the user enters zero
#include <stdio.h>

int main(void)
{
    unsigned number, sum = 0;
    // the body of the loop is executed at least once
    do
    {
        printf("Enter a number: ");
        scanf("%u", &number);
        sum += number;
    }
    while(number != 0);
    printf("Sum = %u",sum);
}

```

Խնդիր 1

Մուտքագրել K և $N(N > 0)$ ամբողջ թվերը: N անգամ արտածել K թիվը:

Խնդիր 2

Մուտքագրել `n` միանիշ թիվը և արտածել `n`-ին չգերազանցող թվանշանները:

Խնդիր 3

Մուտքագրել `n` բնական թիվը և արտածել `n`-ի՝ 1-ից մինչև 9-րդաստիճանների արժեքները:

Խնդիր 4

Մուտքագրել `n` բնական թիվը և արտածել `n`-ը չգերազանցող բոլորբնական թվերը՝ շրջված/հակառակ կարգով:

Խնդիր 5

Օգտագործելով `while` ցիկլը արտածել լատինատառ այբուբենի փոքրատառերը՝ `a`-ից `z`:

Խնդիր 6

Մուտքագրել `n` բնական թիվը և արտածել `n`-ին չգերազանցող բոլորկենտ/զույգ բնական թվերը:

Խնդիր 7

Մուտքագրել `n` բնական թիվը և արտածել դրա թվանշանների քանակը:

Խնդիր 8

Մուտքագրել `n` բնական թիվը և արտածել `n`-ը չգերազանցող բոլորկենտ/զույգ բնական թվերի գումարը/արտադրյալը:

Խնդիր 9

Գրել ծրագիր, որը արտածում է $y = 2x^2 - 5x - 8$ ֆունկցիայի արժեքների աղյուսակը -4 -ից 4 ինտերվալում: Արգումենտի փոփոխման քայլը 0.5 է:

Խնդիր 10

Մուտքագրել n , l , m բնական թվերը: Ցիկլի մեջ n անգամ մուտքագրել թիվ, և պարզել արդյոք այն պատկանում է (l, m) ինտերվալին:

Խնդիր 11

Մուտքագրել a , b թվերը, և գտնել այդ միջակայքի՝ 7 -ի վրա բաժանվող ամենամեծ և ամենափոքր թվերը:

Խնդիր 12

Մուտքագրել a , b , c բնական թվերը: c անգամ մուտքագրել x թիվ, և պարզել պատկանում է արդյոք $x \& (\sim x \ll 2)$ գործողության արդյունքը (a, b) միջակայքին: Պատկանելիության դեպքում արտածել արդյունքը:

Խնդիր 13

Մուտքագրել a , b , c բնական թվերը: c անգամ մուտքագրել x թիվը, և պարզել պատկանում է արդյոք $x \& (\sim x \wedge x)$ գործողության արդյունքը (a, b) միջակայքին: Պատկանելիության դեպքում արտածել արդյունքը:

Դաս 7. break, continue օպերատորներ

Ներկայացվում է *while* և *do while* ցիկլում *break*, *continue* հրամանների կիրառությունը համադրած ճյուղավորման օպերատորների հետ: Ներքևում բերվում է *break* հրամանի օգտագործման օրինակ:

```
// Program to calculate the sum of numbers
// If the user enters a negative number, the loop terminates
#include <stdio.h>

int main(void)
{
    double number, sum = 0.0;

    while (1) {
        printf("Enter n ");
        scanf("%lf", &number);

        sum += number; // sum = sum + number;
        // if the user enters a negative number, break the loop
        if (number < 0.0) {
            break;
        }
    }

    printf("Sum = %.2lf", sum);
}
```

Հաջորդ օրինակը ցույց է տալիս *continue* հրամանի կիրառությունը:

```
// Program to calculate the sum of numbers (10 numbers max)
// If the user enters a negative number, it's not added to the result
#include <stdio.h>
int main(void)
{
    int i = 0;
    double number, sum = 0.0;

    while (i < 10) {
```

```

printf("Enter a n%d: ", i);
scanf("%lf", &number);

if (number < 0.0) {
    continue;
}
sum += number; // sum = sum + number;
}

printf("Sum = %.2lf", sum);
}

```

Խնդիր 1

Մուտքագրել թվերի հաջորդականություն և հաշվել դրանցից դրականների քառակուսիների գումարը, քանի դեռ այն մեծ չէ 200-ից:

Խնդիր 2

Մուտքագրել թվերի հաջորդականություն և հաշվել դրանցից բացասականների քառակուսիների արտադրյալը, քանի դեռ այն մեծ չէ 400-ից:

Խնդիր 3

Մուտքագրել ամբողջ թվերի հաջորդականություն՝ մինչև 0-ի հանդիպելը: Արտածել "Yes", եթե մուտքագրված հաջորդականությունը աճող է, հակառակ դեպքում "No":

Խնդիր 4

Մուտքագրել ամբողջ թվերի հաջորդականություն՝ մինչև 0-ի հանդիպելը: Արտածել "Yes", եթե մուտքագրված հաջորդականությունում իրար հավասար երկու հարևան թվերի գոնե մեկ զույգ կա, հակառակ դեպքում "No":

Խնդիր 5

Մուտքագրել ամբողջ թվերի հաջորդականություն, ավարտել ցիկլը, եթե ընթացիկ մուտքագրված թիվը նախորդից փոքր է:

Խնդիր 6

Ստուգել արդյոք մուտքագրված թիվը հանդիսանում է 3-ի աստիճան:

Խնդիր 7

Մուտքագրված $n > 0$ թվի համար հաշվել ամենամեծ երկուսի աստիճան հանդիսացող թիվը, որը չի գերազանցում n -ը:

Խնդիր 8

Մուտքագրված $n > 0$ թվի համար հաշվել ամենափոքր երկուսի աստիճան հանդիսացող թիվը, որը մեծ է n -ից:

Դաս 8. for ցիկլ, համեմատությունը while ցիկլի հետ

for ցիկլի կառուցվածքը

Բերվում է *for* ցիկլի կառուցվածքը և դրանում համեմատման օպերատորների (<, >, ==, !=, >=, <=) օգտագործումը: Ներքևում բերվում է *for* ցիկլի պարզ օրինակ:

```
#include <stdio.h>

int main(void)
{
    for (int i = 0; i < 10; i += 1) {
        printf("%d\n", i);
    }
    printf("%d\n", i);
}
```

Բերվում է *for* ցիկլում *break*, *continue* հրամանների օգտագործման օրինակներ:

for և while ցիկլերի համարժեքություն

Ներկայացվում է *for* և *while* ցիկլերի համարժեքությունը:

<pre>for (statement1; expression; statement2) { statement1; statement1; ... }</pre>	<pre>statement1; while (expression) { statement1; statement1; ... statement2; }</pre>
---	---

Խնդիր 1

Հաշվել տրված $[A, B]$ միջակայքին պատկանող բոլոր ամբողջ թվերի գումարը/արտադրյալը:

Խնդիր 2

Մուտքագրել i բնական թիվը, եթե այն $[10, 20]$ միջակայքից է, ապաարտածել $[i, 20]$ միջակայքի բոլոր ամբողջ թվերը:

Խնդիր 3

Մուտքագրել i բնական թիվը, եթե այն $[0, 100]$ միջակայքից է, ապաարտածել $[0, i]$ միջակայքի բոլոր ամբողջ թվերը անման/նվազման կարգով:

Խնդիր 4

Մուտքագրել N բնական թիվը և օգտագործելով մեկ ցիկլ հաշվել $1! + 2! + 3! + \dots + N!$ Արտահայտության արժեքը:

Խնդիր 5

Մուտքագրել N բնական թիվը և արտածել Ֆիբոնաչիի հաջորդականության առաջին N անդամները:

Խնդիր 6

Ստուգել արդյոք մուտքագրված բնական թիվը պարզ է:

Խնդիր 7

Արտածել 100-ից փոքր բոլոր բնական թվերը, որոնց քառակուսիներըսիմետրիկ են:

Խնդիր 8

Մուտքագրել N բնական թիվը, այնուհետև մուտքագրել N բնականթվեր: Արտածել բոլոր այն թվերը, որոնք պարզ են:

Դաս 9. Փոփոխականների հասանելիության տիրույթ, զանգվածներ

Փոփոխականների հասանելիության տիրույթ

Ներկայացվում են փոփոխականների հասանելիության տիրույթը, գլոբալ և լոկալ փոփոխականները: Ներքևում բերվում է գլոբալ փոփոխականի կիրառման օրինակ:

```
#include <stdio.h>
/* global variable declaration */
int g;
int main(void)
{
    /* local variable declaration */
    int a, b;
    /* actual initialization */
    a = 10;
    b = 20;
    g = a + b;
    printf ("value of a = %d, b = %d and g = %d\n", a, b, g);
}
```

Միաչափ զանգվածներ

Ներկայացվում են զանգվածներ, դրանց կառուցվածքը և ներկայացումը հիշողության մեջ: Ներքևում բերվում են զանգվածի օրինակներ:

```
#include <stdio.h>

int main(void)
{
    int a[10];
```

```

short s[5];
long long_array[51];
float float_array[6];
double double_array[9];
printf("Size of a = %lu\n", sizeof(a));
printf("Size of s = %lu\n", sizeof(s));
printf("Size of double_array = %lu\n", sizeof(double_array));
}

```

Ներքևում բերվում է զանգվածի էլեմենտին դիմելու օրինակ:

```

#include <stdio.h>

int main(void)
{
    int a[5];
    a[0] = 5;
    a[1] = 7;
    a[2] = 89;
    a[3] = 8;
    a[4] = 21;
}

```

Խնդիր 1

Տրված զանգվածում գտնել դրական/բացասական և զույգ/կենտ էլեմենտների քանակը:

Խնդիր 2

Տրված զանգվածում գտնել այն էլեմենտների քանակը, որոնք փոքր/մեծ են իրենց ինդեքսի քառակուսուց:

Խնդիր 3

Արտածել տվյալ զանգվածի բոլոր էլեմենտները, դրանցից հանելով զանգվածի էլեմենտների միջին թվաբանականը:

Խնդիր 4

Տրված զանգվածում գտնել այն էլեմենտների քանակը, որոնք մեծ/փոքր են երկու հարևանների կիսագումարից:

Խնդիր 5

Տրված զանգվածում տեղերով փոխել առաջին մեծագույն և վերջին փոքրագույն էլեմենտները:

Խնդիր 6

Տրված զանգվածում հաշվել բոլոր այն էլեմենտների գումարը, որոնք գտնվում են առաջին մեծագույն և վերջին փոքրագույն էլեմենտների միջև:

Խնդիր 7

Տրված զանգվածում հաշվել կրկնվող տարրերի քանակը:

Խնդիր 8

Հաշվել զանգվածի այն տարրերի քանակը, որոնք հանդիպում են ճիշտ անգամ, որտեղ k-ն տրված բնական թիվ է:

Խնդիր 9

Տրված զանգվածում հաշվել որևէ թվի ֆակտորիալ հանդիսացող էլեմենտների միջին թվաքանականը:

Խնդիր 10

Տրված զանգվածում հաշվել հարևան էլեմենտների ամենամեծ ընդհանուր բաժանարարների արտադրյալը:

Խնդիր 11

